

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ՏԱՃԱՏ Ծ. ՎՐԴ. ԵԱՐՏԸՄԵԱՆ

ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ Ս. ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏԻՈՔԱՅԻԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՆ ՄԷՋ (Ա. ԴԱՐ)

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ ԱՌԱՋԻՆ ԴԱՐԷՆ. Իմ նախորդ ուսումնասիրություններում մեկը նուիրեր էի «Եպիսկոպոս» տիտղոսը եւ պաշտօնը կրող անձնատրութեան, անոր մարդկային, քրիստոնէական, եկեղեցական, բարոյական նկարագիրին, անոր ընտրութեան, ինչպէս նաեւ անոր առաջնորդական պաշտօնին, պարտականութիւններուն, պատասխանատւութիւններուն եւ այլ յարակից նիւթերու¹:

Այդ աշխատութեան մէջ, Եպիսկոպոսին անձը ներկայացուցեր էի համաձայն Հայ եկեղեցական ընդհանուր մտածողութեան, որ իր պաշտօնին գորութեամբ, ունի եկեղեցական յատուկ իշխանութիւններ եւ առաջնորդական-վարչական իւրայատուկ հանգամանք:

Հեղինակաւոր գրիչի մը լուրջ կարծիքը վկայակոչելով, ըսեր էի թէ «Եպիսկոպոս»ը մէկն է, որ «Աստուած ներկայացնելու պաշտօնը ունի»², այսինքն՝ մէկը, որ «Աստուծոյ ներկայացուցիչն է» երկրի վրայ, որուն մէջ մենք ստիպուած ենք հոգեղէն տարրեր եւ արժէքներ փնտռել եւ տեսնել...

Այս իմաստով եւ մերձեցումով, ներկայ ուսումնասիրութիւնը աւելի լոյս կը սփռէ նախորդ աշխատասիրութեան վրայ, մակերես բերելով յատկապէս Ա. դարուն ապրած զարմանալիօրէն մեծ հոգիի մը՝ Ս. Իգնատիոս Անտիոքացի «աստուածագեաց» Հայրապետին մտածողութիւնը, տեսակէտը եւ ըմբռնումը «Եպիսկոպոս»ի անձին, անոր հոգիին, պաշտօնին եւ մանաւանդ անոր եկեղեցական ինքնութեան եւ եկեղեցական հանգամանքի մասին:

Ս. Իգնատիոս Անտիոքացի Հայրապետին «Նամակները» հարազատ վկայու-

1 Տե՛ս **Տաճատ Ծ. վրդ. Եարտըմեան**, Եպիսկոպոսը հայ եկեղեցական մտածողութեան մէջ, Վնենտիկ, 2003: Յաջորդաբար, առիթ պիտի ունենամ Եպիսկոպոսը առանձնապէս ներկայացնելու նաեւ «Կանոնագիրք Հայոց»ի մտածողութեան մէջ:

2 **Յակոբ Օշական**, Մեր Մատենագիրները, Անթիլիաս, Լիբանան, 1987, էջ 103-104:

թիւներ են թէ առաջին դարուն ինչպէ՛ս ըմբռնուած եւ ինչպէ՛ս ընդունուած էր «Եպիսկոպոս»ին անձը, եկեղեցական ինքնութիւնը, պաշտօնը եւ առաջնորդի հանգամանքը: Պէտք է շեշտուի կարեւորութիւնը եւ նշանակութիւնը անոր մտածողութեան եւ ըմբռնումին, որովհետեւ անոնց մէջ կ'արտացոլուին Ա. դարու նախնական եւ նորակազմ Եկեղեցւոյ կրօնական ծագումնային մտածողութիւնը, ընկալումը եւ համոզումը:

Ս. Իգնատիոսի մտածողութեան մէջ ալ «Եպիսկոպոս»ը ըմբռնուած է մարդկային եւ ընկերային ընթացիկ արժէքներէն շատ վեր՝ «Աստուած ներկայացնելու» իր սրբազան պաշտօնին եւ պատասխանատւութեան գերագոյն մակարդակին վրայ:

Այս օրերուս, եթէ ուզենք «Եպիսկոպոս»ին եկեղեցական ու կրօնական ինքնութիւնը եւ հանգամանքը վերաբժեւորել, անհրաժեշտ է որ հաղորդակից ըլլանք Ա. դարու Եկեղեցիի բացառիկ այս անձնաւորութեան եւ հաւատքի մարտիրոս՝ Ս. Իգնատիոսի աստուածաբանական հարուստ մտածողութեան՝ Քրիստոսի Եկեղեցին եւ Եպիսկոպոսը ըմբռնելու անոր իւրայատուկ պատկերացումին³:

ԵԿԵՂԵՑԻՆ ԻՆՉՊԵՄ Կ'ԸՄԲՌՆԷ ԵՒ ԻՆՉՊԵՄ Կ'ԸՆԿԱԼԷ «ԵՊԻՄԿՈՊՈՍ»Ը. Եպիսկոպոսութիւնը, «Եպիսկոպոս»ը (յունարէն επίσκοπος, որ կը նշանակէ Տեսուչ, Վերատեսուչ, Վերադիտող, Հսկող, Ղեւ) բարձրագոյն աստիճանն է Քրիստոնէայ Եկեղեցւոյ նուիրապետական աստիճանակարգին (անգլ. Hierarchy):

Ինչպէս գիտենք, երեք դասակարգ գոյութիւն ունի Եկեղեցւոյ Նուիրապետութեան մէջ՝ սարկաւազներ, քահանաներ եւ եպիսկոպոսներ: Սակայն, «Եպիսկոպոսը Իշխանն է Եկեղեցւոյ, Առաջնորդը ժողովուրդին եւ Կառավարիչը թեմին» եւ իր համայնքի «Քրիստոնէական Հաւատքին գլխաւոր պատասխանատուն»: Այդ պատճառով ալ, իր պաշտօնին ունեցած իրաւասութեան զօրութեամբ, Եպիսկոպոսը կը դառնայ Եկեղեցւոյ վիճակը եւ գործունէութիւնը իրատես դատումի ենթարկող պատասխանատու անձնաւորութիւն մը:

Ասոր համար, «Եպիսկոպոսութիւնը լրումն է եկեղեցական իշխանութեան... եւ բարձրագոյն իշխանութիւնը», - կը գրէ Հայ Եկեղեցւոյ հեղինակաւոր Հայրապետ Ս. Ներսէս Շնորհալիւն⁴:

Արձագանքելով Եկեղեցւոյ մէջ գոյութիւն ունեցող այս ըմբռնումին, նոյն Հայրապետը կը գրէ. «Պէտք է գիտնալ նաեւ թէ ի՞նչ նպատակով Քրիստոսի եւ Իր Առաքեալներուն կողմէ Եպիսկոպոսութեան պաշտօնը հաստատուեցաւ: Պատճառը յստակ է. որպէսզի քահանաներուն եւ ժողովուրդին գլուխ եւ հրամանատար ըլլան, իբր ղէտ՝

3 Ս. Իգնատիոս Անտիոքացիի գրիչին պատկանող «Նամակներ»ը հայերէն թարգմանութեամբ երկու հրատարակութիւններ գոյութիւն ունին եւ բովանդակութեամբ մէկը միւսէն քիչ մը ամփոփ. ա. **Իգնատիոս Աստուածազգեսց,** Թուղթը, Կ. Պոլիս, 1783, գրաբար, տպ. Ստեփանոս Պետրոսեանի. բ. **Ս. Իգնատիոս Աստուածազգեսց,** Թուղթը, Երեւան, 2003, տպարան «Վրուֆէլ» ՍՊԸ, արեւելահայերէն թարգմանութիւն (թարգմանիչի ինքնութիւնը անձանօթ): Գրաբար հրատարակութիւնը տրամադրութեան տակ չունենալով, օգտագործած եմ երկրորդ հրատարակութիւնը: Այն հատուածները, որ զիս հետաքրքրած են՝ վերածած եմ արեւմտահայերէնի: Մէջբերուած հատուածներուն էջաթիւերն ալ կը յղուին այս երկրորդ հրատարակութեան:

4 Տե՛ն **Գարեգին Ա. Սարգիսեան Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հայրենիքը պատկերն է Հայութեան, գիրք Ա., Ս. Էջմիածին, 2000:

մտքի աննինջ աչքերով բոլորին վրայ հսկեն, սխալողները ուղղեն և ուղիղները ուղղության մէջ պահեն»⁵:

Հետեւաբար, Եպիսկոպոսը, Շնորհալի Հայրապետի մտածողության մէջ, քահանաներուն, սարկաւագներուն և «Քրիստոնեայ հասարակութեան» «Գլուխն է», «Հրամանատարը», «Դէտը» և «Հսկողը», որ աննինջ տրամադրութեամբ պէտք է հովուէ, հսկէ, պահպանէ և ուղղէ:

Շատ նշանակալից է Շնորհալիի հետեւեալ բացատրական նկատումն ալ. «Վերակացու ըլլալ Աւետարանի Խօսքերուն, այսինքն՝ ուսանիլ և գիտնալ և սպասաւորել աստուածային Օրէնքներու քարոզութեան: Նախ այս պարտականութիւնը ստանձնել և ապա նիւթական գործերով մտահոգուիլ, ինչպէս որ Առաքեալները ըրին և սորվեցուցին: Որովհետեւ կ'ըսէին. «Ըիշտ չէ որ թողունք Աստուծոյ Խօսքը և սեղաններուն ծառայենք» (Գործք Զ. 2): Թէև այս սեղանը աղքատներու սպասաւորութեան համար էր և ոչ իրենց, բայց որովհետեւ աղքատներուն մարմինը կերակրելը նուազ բարիք կը համարէին, քան բարիքներէ աղքատացած հոգիները հոգեւոր կերակուրով, այսինքն՝ Աւետարանի վարդապետութեամբ կերակրելը, այս պատճառով Ստեփանոսը և անոր ընկերները կարգեցին ժողովուրդին նիւթական կերակուրները մատակարարելու, իսկ իրենք՝ Առաքեալները, Աստուծոյ Խօսքը կը քարոզէին (Գործք Զ. 5): Ասիկա է, ահաւասիկ, Աւետարանի վարդապետութեան «վերակացու» ըլլալը... Այս է, որ Առաքեալը կը հրամայէ Եպիսկոպոսներուն, որոնք Առաքելական Աթոռը ժառանգելով՝ կը պարտաւորուին Առաքեալներուն գործն ալ ստանձնել, ինչպէս որ եղան անոնց հետեւող մեր Սուրբ Հայրերը»⁶:

Ս. Ներսէս Շնորհալիին տուած այս բացատրութիւնը ցոյց կու տայ, թէ ան իւրացուցած էր Նոր Կտակարանէն բխող առաքելական-հովուական հոգիին...

Ասոր իբր հետեւանք, Եպիսկոպոսը, իր մարդկային ու քրիստոնէական բարձր հոգիով, առաքինութիւններով և յատկանիշներով, պէտք է նմանի Քրիստոսի, որովհետեւ Քրիստոսն է բոլոր «Հոգիներուն Հովիւը և Տեսուչը» (Ա. Պետրոս Բ. 25):

Օրմանեան Սրբազան, ծանօթ ըլլալով Եկեղեցւոյ այս ըմբռնումին, Եպիսկոպոսին պաշտօնը և հանգամանքը այսպէս կը սահմանէ. «Եպիսկոպոսը իր Վիճակին (Թեմին կամ Համայնքին) թեմական կառավարութեան գլուխն է, կատարեալ իրաւասութեամբ ամէն գործերու և ամէն պաշտօնավարութեանց վրայ, որոնք նոյն Թեմի շրջանակին մէջ կը պարփակուին», ուրիշ խօսքով՝ «Եպիսկոպոսը Վիճակի (Թեմի) մը գլուխն է»⁷:

5 Ս. Ներսէս Շնորհալի, Թուղթ Ընդհանրական, Վննետիկ, 1873, էջ 114: «Եպիսկոպոսը վերատեսուչ և դէտ կը կոչուի», - կ'ըսէ Ս. Գրիգոր Տաթևացի Վարդապետը, Գիրք Հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 534. վերատպութիւն՝ Երուսաղէմ, 1993:

6 Ս. Ներսէս Շնորհալի, Թուղթ Ընդհանրական, էջ 128-129:

7 Մաղաքիա արք. Օրմանեան, Հայոց Եկեղեցին, Պէյրութ, 1960, էջ 123. Մաղաքիա արք. Օրմանեան, Աթոռ Հայաստանեայց, Վաղարշապատ, 1886, էջ 78: Եպիսկոպոսական պաշտօնի մասին տեսնել նաև Դերենիկ եպս. Փղատեան, Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Խորհուրդները, Պէյրութ, 1957, էջ 60-61. Տաճատ ծ. վրդ. Եսարոյմեան, Եպիսկոպոսը Հայ եկեղեցական մտածողութեան մէջ, էջ 61-62. Արշակ Տէր-Միքէլեան, Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ Եկեղեցին և իր Սուրբ Կարգը, Վաղարշապատ, 1897, էջ 3-34. F. L. Cross - E. A. Livingstone, The Oxford Dictionary of the Christian Church,

Առանց մխրճուելու բանասիրական պրպտումներու մէջ եւ ճշտելու Թաղէոս առաքեալի անունով մեզի հասած Կանոններու գրութեան կամ ձեւաւորման մերձաւոր կամ հաւանական ժամանակաշրջանը, այդ Կանոններուն մէջ ո՛չ միայն Եպիսկոպոսի անձէն կը պահանջուին մարդկային, կրօնական եւ եկեղեցական հիմնական առաքինութիւններ եւ բնորոշ յատկանիշներ, այլ կը նշուին նաեւ անոր հովուական ու վարչական պաշտօնին, պարտականութեան, պատասխանատուութեան եւ բարձր հանգամանքին ընդհանուր սահմանները: Ահաասիկ մեզ հետաքրքրող հատուածը. «Եպիսկոպոսը ըլլալու է անարատ, պարկեշտ, ուսուցանող, ոչ-արծաթասէր, ոչ-արեցող, ոչ-շատակեր, պէտք չէ ըլլայ ընչաքաղց, կռուասէր, կաշառակեր, այլ հանդարտ, ինչպէս ըսած է մեր եղբայրը՝ Պօղոս Առաքեալ, ըլլալու է բարի օրինակ, տքնող, ժուժկալ, աշխատասէր, ամէն ինչի մէջ օրինակ ըլլալ հօտին, ձեռնադրութիւն կատարել այն արժանաւորներուն, որոնք գիտակից եւ Աստուածաշունչի գիտութեան եւ Աստուծոյ Օրէնքներուն հմուտ են: Տգեւները պէտք չէ ձեռնադրել, որովհետեւ տգիտութիւնը բոլոր չարիքներէն աւելի ատելի է Աստուծոյ: Այս կէտին շատ ուշադիր ըլլալու է, քանի որ տգէտ Քահանայ կամ Սարկաւագ եւ կամ ո՛րեւէ մէկը եկեղեցական աստիճանէ, Աստուծոյ բարկութիւնը կը գրգռէ... եւ այս բոլորին վնասակար հետեւանքի պատասխանատուն ինքը՝ Եպիսկոպոսը կը նկատուի»⁸:

Յայտնի է, թէ Եկեղեցոյ կազմակերպումի սկզբնական ժամանակաշրջանին (Ա. դար), «Եպիսկոպոս» եւ «Երէց» կոչումները հաւասարապէս գործածուած են, ինչպէս օրինակ՝ «Առաքեալներու Գործեր»-ուն մէջ. «Պօղոս Միլետոսին միջոցով լուր դրկեց Եփեսոս եւ Եկեղեցոյ Երէցները իր քով կանչեց... (եւ ըսաւ)՝ Հսկեցէք ձեր անձերուն եւ ձեր ամբողջ հօտին, որուն տեսուչ կարգեց ձեզ Սուրբ Հոգին» (գլ. Ի. 17 եւ 28): Սակայն, Բ. դարու սկիզբին արդէն, Եկեղեցոյ ամէնէն հեղինակաւոր վկաներէն Ս. Իգնատիոսի համար, Եկեղեցոյ Քահանայական աստիճանակարգի երեք տարբերակները յստակօրէն կը զանազանուին. Եպիսկոպոսներ, Քահանաներ (= Երէցներ) եւ Սարկաւագներ:

Այս տեսակետով, եկեղեցական հեղինակաւոր բառարան մը կը գրէ. «Բ. դարու կէսէն սկսեալ, Քրիստոնէութեան առաջնորդական կեդրոնները կամ համայնքները կը յայտնուին արդէն իրենց առանձին Եպիսկոպոսներով եւ անկէ ետք ալ Քրիստոնէութիւնը ամէն տեղ կազմակերպուած էր Եպիսկոպոսական իշխանութեան վրայ»⁹:

Ս. ԻԳՆԱՏԻՈՍԻ ԱՍՏՈՒՄԾԱՐԱՆԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆԸ. Ս. Իգնատիոս Անտիոքացիի եղած է Յովհաննէս Աւետարանիչին աշակերտը: Իսկ աւանդութեան մը

Oxford University Press, 1993, էջ 175-177. **Nicon Rev. Patrimacos**, A Dictionary of Greek Orthodoxy, Minneapolis (Minnesota), 1997, էջ 57-61:

8 Տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հտ. Բ., Երեւան, 1971, էջ 20-21, հրտկ.՝ Վազգէն Յակոբեանի. հմմտ. նաեւ էջ 22-23: «Որովհետեւ ո՛վ որ (Եկեղեցոյ նուիրապետական աստիճանակարգին մէջ) մեծ է՝ ան ծանրագոյն պատասխանատուութեան տակ է, իբր ան, որ բոլորը իր մէջ կը պարունակէ», - կը բացատրէ **Ս. Ներսէս Շնորհալի**, Թուրք, Վենետիկ, էջ 35:

9 **F. L. Cross - E. A. Livingstone**, The Oxford Dictionary of the Christian Church, էջ 176: Ուղղակի եւ անուղղակի ձեւով այս նիւթին անդրադարձած է նորագոյն եւ յուր ուսումնասիրութիւն մը՝ **Ներսէս առ. քինյ. Ներսէսեան**, Ծովսի առաջացումը Եկեղեցու վարչական կազմակերպութեան մէջ եւ դրա ունեցած հետեւանքները. «Հասկ» (ամսաթերթ, Անթիպաս-Լիբանան), 2013, թ. 10, էջ 1047-1056:

համաձայն, Անտիոքի թեմին Եպիսկոպոս-առաջնորդ նշանակուած եւ ձեռնադրուած է Ս. Պետրոս առաքեալին կողմէ:

Իբր Անտիոքի Եպիսկոպոս՝ ան ծառայած է շուրջ քառասուն տարի եւ շատ մեծ հեղինակութիւն վայելած է Արեւելքի մէջ: Հռոմէացի Տրայիանոս կայսեր (98-117) կողմէ Քրիստոնեաներուն դէմ շղթայազերծուած հալածանքի շրջանին, ձերբակալուած եւ դատապարտուած է մահուան: Զինուորականներու ուղեկցութեամբ Անտիոքէն շղթայակապ փոխադրուած է Հռոմ, ուր Colosseum կոչուած ամփիթատրոնին կամ մեծ կրկեսին մէջ նետուած է անօթի առիւծներու դիմաց, որոնք անմիջապէս բզկտած են անոր մարմինը, հաւանաբար 117 թուականին (ուրիշներ անոր մահուան թուականը կը նշեն 107):

Ս. Իգնատիոսի՝ Տէր Յիսուս Քրիստոսի Անձին եւ Անոր Վարդապետութեան հանդէպ ցուցաբերած հաւատքը եւ բարձր հաւատարմութիւնը Քրիստոնեայ յաջորդ սերունդներուն կողմէ ընդունուած են իբր հաւատքի բացառիկ երեւոյթ եւ բարձր ներշնչարան:

Անտիոքէն դէպի Հռոմ ճամբուն վրայ, ամէն տեղ մեծ յարգանքով դիմաւորուած է Քրիստոնեաներու կողմէ, որոնք երբեմն կաշառելով զինուորականները՝ թոյլատուութիւն ստացած են կարճ ժամանակով հանդիպելու Ս. Իգնատիոսին եւ լսելու բացառիկ շնորհքներով օժտուած Անտիոքի այս Եպիսկոպոսը: Ան կ'ակնարկէ տեղ մը. «Հոգիս կ'ողջունէ ձեզ, նաեւ բոլոր Եկեղեցիները (համայնքները), որոնք ընդունեցան զիս իբր Յիսուս Քրիստոսի պատկերը եւ ո՛չ իբր ճամբորդ: Կ'ողջունեն նաեւ անոնք, որ ճամբուս վրայ չէին, բայց իւրաքանչիւր քաղաքէ ինծի ընդառաջ գալով՝ կը դիմաւորէին զիս»¹⁰:

Պէտք է հիշել, որ Հռոմ ուղեկցութեան ընթացքին, Եկեղեցւոյ այս Սուրբ Հայրապետը բազմաթիւ Նամակներ գրած է՝ ուղղուած այդ ժամանակաշրջանի Քրիստոնեայ համայնքներուն կամ Եկեղեցիներուն, որոնցմէ պահպանուած են կամ վաւերական կը նկատուին միայն եօթը նամակ: Այս Նամակները գրած է ան հաւատացեալ Քրիստոնեաները հաւատքի մէջ ամրապնդելու եւ կրօնական, եկեղեցական եւ հաւատքի կեանքին վերաբերող թելադրանքներ ընելու նպատակով¹¹:

Այս ոչ հակիրճ Նամակները կը նկատուին Քրիստոնէական Հոգեկանութեան (spirituality) եւ Եկեղեցաբանութեան (ecclesiology) գանձերէն մէկը, ինչպէս նաեւ Եկեղեցւոյ սկզբնական շրջանի Քրիստոնեայ համայնքներու կամ Եկեղեցիներու մասին կարեւոր տեղեկութիւններ հայթայթող աղբիւր:

10 Ս. Իգնատիոս Աստուածազգեսց, Թղթեր, Նամակ Հռոմի հաւատացեալներուն, Երեւան, 2003, էջ 37:

11 Ս. Իգնատիոսի անձին եւ անոր Նամակներու մասին տնէն Մատթէոս վրդ. Թէօփիլեանց, Կենսագրութիւն Երեւելի Արանց, հուն. Ա., Վենետիկ, 1839, էջ 527-529. Շնորհք արք. Գալուստեան, Համաքրիստոնէական Սուրբեր, Իսթանպուլ, 1978, էջ 34-36. Եզնիկ ծ. վրդ. Պետրոսեան, Հայրաբանութիւն, մաս Ա., Ս. Էջմիածին, 1996, էջ 39-41. Թամար Տասնապետեան, Ընդհանրական Եկեղեցւոյ Հայրեր, Պէյրութ, 1998, էջ 19-20. “Bibliotheca Sanctorum”, Torino, 1968. J. John Delaney, Dictionary of Saints, New York, 1980, էջ 297, ed. Doubleday. Alexander Roberts - James Donaldson, Ante-Nicene Fathers, v. I, 4th ed., Peabody (Massachusetts), Hendrickson Publishers Inc., 2004, էջ 45-48, 129-131. “The Apostolic Fathers”, edited by Bart D. Ehrman, v. I, London, 2003, էջ 203-217:

Այսպես, օրինակ, մինչ Կոնստանդնուպոլսի (+101) վերագրումը («Առ Կորնթացիս» կոչումը) նամակին մեջ՝ իբր «Եկեղեցւոյ պաշտօնեաներ» կը յիշուին Եպիսկոպոսը, Երեքը եւ Սարկաւագը, բայց Եպիսկոպոս եւ Երեք հասկացութիւնները գրեթէ չեն զանազանուիր իրարմէ, ինչ որ բնորոշ է Ա. դարու վերջի մթնոլորտին¹², Ս. Իգնատիոսի Նամակներուն մէջ առաջին անգամ ըլլալով կը հանդիպինք արդէն «Եպիսկոպոս»ի եւ «Երեք»ի (Քահանայի) բացայայտ տարբերակումին¹³: Նմանապէս, այս Նամակներէն մէկուն մէջ է, որ առաջին անգամ կը հանդիպինք «Ընդհանրական Եկեղեցի» ըմբռումին եւ սահմանումին¹⁴:

Իր Նամակներուն մէջ, Ս. Իգնատիոս կը խոստովանի՝ ուղղակի Առաքեալներէն ժառանգ ստացած իր բացառիկ հաւատքը Քրիստոսի հանդէպ:

Ան առաքելական նախանձախնդրութեամբ եւ հովուական հոգածութեամբ կը խօսի Ս. Երրորդութեան, Մարդեղութեան, Փրկագործութեան, Ս. Հաղորդութեան, Եկեղեցւոյ եւ Ամուսնութեան մասին: Անոր Նամակները լեցուն են հաւատքի խոր, վսեմ եւ բացառիկ ըմբռումներով եւ արտայայտութիւններով, ինչպէս նաեւ Տիրոջ՝ Յիսուս Փրկիչի հանդէպ ունեցած անսպառ սիրով:

Սակայն, անոր Նամակներէն դուրս ցայտող կեդրոնական միտքը «Միութեան» գաղափարն է. Աստուծոյ Երրորդութեան միութիւնը, Քրիստոնեայ անհատին միութիւնը Քրիստոսի հետ, Քրիստոնեաներուն միութիւնը իրարու հետ եւ Եկեղեցւոյ մէջ, որ Եպիսկոպոսով կ'արտայայտուի՝ Քահանաներով եւ Սարկաւագներով շրջապատուած: Իսկ Եկեղեցւոյ միութիւնը պէտք է տեսնել Եպիսկոպոսի անձին մէջ: Եւ Եկեղեցւոյ միութեան պահպանումը հնարաւոր է միայն Եպիսկոպոսին եւ ընդհանրապէս Քահանայական դասակարգին հնազանդելով:

Եպիսկոպոսական աստիճանին պատմական գնահատանքը տալու համար՝ անհրաժեշտ ու շատ կարեւոր է դիտել նախնական Եկեղեցւոյ մտածողութիւնը, ըմբռումը եւ ընկալումը, ինչպէս նաեւ յատուկ ուշադրութիւն պէտք է տրուի նախնական Եկեղեցւոյ ծիսական կեանքին, յատկապէս Ս. Պատարագի խորհուրդին (Յիսուսի վերջին ընթրիքին), որուն կը մասնակցէր եւ կը նախագահէր Եպիսկոպոսը, Քրիստոսը ներկայացնող եւ Քրիստոսի նմանողութեամբ:

Ս. Իգնատիոսի համաձայն՝ Եկեղեցւոյ Նուիրապետութիւնը հաստատուած է Քրիստոսի կողմէ եւ ունի եռեակ նկարագիր. վարչական, սրբագործական եւ ծառայական, որոնց համապատասխան աստիճանակարգն է Եպիսկոպոսութիւնը, Քահանայութիւնը եւ Սարկաւագութիւնը: Ասոնց մէջ բարձրագոյնն է Եպիսկոպոսութիւնը: Ասկէ կը ծագի կարեւորութիւնը Եպիսկոպոսութեան՝ իբր Եկեղեցւոյ միութեան կեդրոն:

Ս. Իգնատիոսի Նամակները, իբր եկեղեցական հաւաստի աղբիւր, այս մասին առատօրէն կը խօսին ու կը վկայեն բացառիկ արտայայտութիւններով: Լսենք անոր խօսքերը.

12 Հմմտ. Եգնիկ Ժ. վրդ. Պետրոսեան, Հայրաբանութիւն, մաս Ա., էջ 37:

13 Հմմտ. «Թղթեր», էջ 9, 20, 27, 31, 48-49:

14 Տե՛ս Նամակ Զմիռնիացիներուն, էջ 49:

ա. «Կը խնդրեմ, որ ամեն ինչ կատարէք միաբանութեամբ եւ Աստուծով: Եպիսկոպոսը ձեր վրայ կարգուած ըլլայ՝ ինչպէս Աստուած, եւ Քահանաները՝ ինչպէս թագաւորի պատգամաւորներ, իսկ Սարկաւագները՝ Առաքեալներու նման. անոնք շատ սիրելի են ինծի, որոնց վստահուած է Յիսուս Քրիստոսի սպասաւորելու պաշտօնը... Հնազանդեցէ՛ք Եպիսկոպոսին, որ ձեր վրայ կարգուած է իբր բարի օրինակ եւ անպակասութեան ուսուցիչ»¹⁵:

բ. «Առանց Եպիսկոպոսին ո՛չ մէկ գործ ըրէք»¹⁶:

գ. «Ամեն ոք թող պատկառի Սարկաւագներէն, ինչպէս Յիսուս Քրիստոսէ եւ Եպիսկոպոսներէն՝ ինչպէս Հօր Աստուծմէ, նաեւ Քահանաներէն՝ ինչպէս Աստուծոյ խորհրդակիցներէն եւ Առաքեալներու կարգակիցներէն, որովհետեւ առանց ասոնց չկայ Եկեղեցի: Գիտեմ, որ դուք ալ այսպէս կ'ընդունիք եւ տեսայ ձեր սիրոյ կապը, որ կատարեալ է ձեր Եպիսկոպոսին հանդէպ, որուն գործունէութիւնը մեծ քարոզութիւն է եւ հեզութիւնը՝ զօրութիւն»¹⁷:

դ. «Ուստի, պառչած է որ Եպիսկոպոսին նայիք՝ ինչպէս մեր Տիրոջ»¹⁸:

Բացայայտ է, ուրեմն, թէ Եպիսկոպոսական աստիճանը, պաշտօնը եւ հանգամանքը՝ նախնական Եկեղեցին կը դիտէր իբր շարունակութիւնը Առաքեալներու առաքելութեան եւ գործունէութեան: Հոն, ուր Եպիսկոպոս կայ, հոն հաւատացեալներ կան, ճիշտ այնպէս՝ ուր որ Յիսուս Քրիստոս կայ, հոն կայ Ընդհանրական Եկեղեցին: Առանց Եպիսկոպոսի՝ թոյլաւորութիւն չկայ մկրտելու կամ Ս. Պատարագ մատուցանելու: Լսենք Ս. Անդրոբազիի աստուածաբանական զօրեղ մտածողութիւնը եւ անոր կրօնական-եկեղեցական խորութիւնը:

ե. «Ամենքդ հնազանդեցէ՛ք (կամ հետեւեցէ՛ք) Եպիսկոպոսին, ինչպէս Յիսուս Քրիստոսին եւ Հայր Աստուծոյ եւ Քահանաներուն՝ ինչպէս Քրիստոսի Առաքեալներուն եւ Սարկաւագներէն պատկառեցէ՛ք ինչպէս Աստուծոյ հրամանէն: Առանց Եպիսկոպոսի ո՛չ ոք եկեղեցական ո՛րեւէ գործ կատարէ: Իսկական Պատարագ կը նկատուի այն, որ Եպիսկոպոսին կողմէ կը կատարուի կամ անոր՝ ո՛վ որ Եպիսկոպոսէն հրաման ունի գործելու: Ամբողջ բազմութիւնը թող գտնուի հոն, ուր Եպիսկոպոս կայ, ինչպէս ուր որ Յիսուս Քրիստոսն է: Առանց Եպիսկոպոսի (հրամանին) իրաւունք չկայ ո՛րեւէ մէկը մկրտելու եւ ո՛չ Սիրոյ ճաշ կատարելու (= Պատարագ: Այս հրահանգը յետոյ դադրած է գործածութենէ Տ. ծ. վ. Ե.), այլ ինչ որ Եպիսկոպոսը կը տնօրինէ՝ այդ է Աստուծոյ հաճելին, որպէսզի ինչ ալ կատարուի՝ ճշմարիտ եւ վստահելի ըլլայ»¹⁹:

զ. «Աղօթքներու մէջ յիշեցէ՛ք Ասորիքի Եկեղեցին, որուն Առաքեալը կոչուելու արժանի չեմ: Ողջ եղէք Տէր Յիսուս Քրիստոսով. հնազանդեցէ՛ք Եպիսկոպոսին, ինչպէս Աստուծոյ հրամանին»²⁰:

¹⁵ Նամակ Մագնեսիացիներուն, էջ 21-22:

¹⁶ Անդ, էջ 22:

¹⁷ Նամակ Տրալլիանոսացիներուն, էջ 27:

¹⁸ Նամակ Եփեսացիներուն, էջ 10:

¹⁹ Նամակ Զմիտնիացիներուն, էջ 48-49: Հմմտ. **E. Martin Marty**, *A Short History of Christianity*, New York, 1959, էջ 75-76, ed. by Meridian Books. **Ներսէս առ. քնյ. Ներսէսեան**, Ծովսի առաջացումը Եկեղեցու վարչական կազմակերպութեան մէջ եւ դրա ունեցած հետեւանքները, էջ 1053-1054:

²⁰ Նամակ Տրալլիանոսացիներուն, էջ 31:

է. «Եթէ Եպիսկոպոսին կը հնազանդիք, ինչպէս Յիսուս Քրիստոսի, ինծի կը թուի թէ ո՛չ թէ մարմնի մէջ էք, այլ Տէր Յիսուս Քրիստոսի... Լաւ է որ առանց Եպիսկոպոսի ոչինչ գործէք»²¹:

Միւս կողմէ, Եկեղեցոյ միութեան եւ միաբանութեան, ինչպէս նաեւ Եպիսկոպոսի հպատակութեան եւ հնազանդութեան մէջ՝ Ս. Իգնատիոս կը տեսնէ Աստուծոյ կողմէ կատարուած փառաւորումը:

ը. «Ուստի, վայել է, որ դուք ալ Եպիսկոպոսներու կամքով գործէք, ինչպէս եւ կը կատարէք: Այսպէս նաեւ ձեր Քահանաները, որոնք արժանի են իրենց անունին եւ Աստուծոյ, միաբան են Եպիսկոպոսին հետ, ինչպէս քնարին լարերը: Որովհետեւ ձեր միաւորութեամբ՝ ձեր միաբանութիւնը կը փառաւորուի Յիսուս Քրիստոսով»²²:

թ. «Հնազանդ եղէք Եպիսկոպոսին... ինչպէս Յիսուս Քրիստոսը Հօր եւ Առաքեալները՝ Յիսուս Քրիստոսին եւ Հօր, որպէսզի հոգեւոր ու մարմնաւոր միաբանութիւն ըլլայ»²³:

ժ. «Պատշաճ է, որ չնայիք ձեր Եպիսկոպոսի տարիքին, այլ Աստուծոյ զօրութեան: Անոր պատիւ ցոյց տուէք արժանիքի համաձայն, ինչպէս իմացայ ձեր սուրբ Քահանաներու մասին, որոնք չեն նայիր անոր երեւցող երիտասարդ տարիքին, այլ իբր իմաստուն մարդով՝ կը հնազանդին անոր: Ո՛չ միայն անոր, այլեւ Յիսուս Քրիստոսի Հօր, որ բոլորին Եպիսկոպոսն է: Որովհետեւ եթէ Ան (Քրիստոս) Եպիսկոպոսի պատիւը ուզեց, ապա դուք ալ պիտի լսէք անոր՝ առանց կեղծաւորութեան: Իսկ ո՛վ որ արհամարհել կ'ուզէ (Եպիսկոպոսը), ո՛չ թէ երեւցող Եպիսկոպոսը կ'արհամարհէ, այլ աներեւոյթ Աստուածը»²⁴:

ժա. «Պատշաճ է որ ամենքդ, մանաւանդ Քահանաները, հոգատար ըլլաք Եպիսկոպոսին հանդէպ՝ ի պատիւ Հօր, Անոր Որդիին եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի եւ Սուրբ Առաքեալներուն»²⁵:

ժբ. «Զհակառակիք եւ չհեռանաք Յիսուս Քրիստոսէն, Անոր Առաքեալներէն եւ ձեր Եպիսկոպոսէն: Որովհետեւ ո՛վ որ հորանին ներսն է՝ մաքուր է, իսկ ո՛վ որ առանց Եպիսկոպոսին գործ մը կը կատարէ՝ անսուրբ է սրտով»²⁶:

ժգ. «Լաւ բան է Աստուած եւ Եպիսկոպոսը ճանչնալ եւ ո՛վ որ Եպիսկոպոսը կը պատուէ՝ Աստուծոյ պատիւը կը գտնէ, իսկ ո՛վ որ ո՛րեւէ բան կը գործէ եւ Եպիսկոպոսէն գաղտնի կը պահէ, ան սատանային է որ կը ծառայէ»²⁷:

ժդ. «Զանազէ՛ք Եպիսկոպոսին հակառակ չըլլալ, որպէսզի Աստուծոյ հնազանդ ըլլաք»²⁸:

ժե. «Ուրեմն, հնազանդ եղէք Եպիսկոպոսին եւ Քահանաներուն, որպէսզի ամէն ինչի մէջ մաքուր ըլլաք»²⁹:

21 Անդ, էջ 27:

22 Նամակ Եփեսացիներուն, էջ 9:

23 Նամակ Մագնեսիացիներուն, էջ 25:

24 Անդ, էջ 20:

25 Նամակ Տրալլիանոսացիներուն, էջ 31:

26 Անդ, էջ 29:

27 Նամակ Զմիռնիացիներուն, էջ 49:

28 Նամակ Եփեսացիներուն, էջ 10:

29 Անդ, էջ 9:

ժգ. «Լոյսի եւ ճշմարտութեան որդիներ, փախէ՛ք բոլոր հերձուածներէ եւ չար վարդապետութիւններէ... հեռու մնացէ՛ք չար արմատներէ, որոնք մեր Տէր Յիսուս Քրիստոսը չէ տնկած... Իսկ անոնք, որ Աստուծոյ հետ են, Եպիսկոպոսին հետ են»³⁰:

ժԷ. «Նայեցէ՛ք Եպիսկոպոսին, որպէսզի Աստուած ալ ձեզի նայի... Եթէ կը հնազանդիք Եպիսկոպոսին... թող ձեզի հետ են ալ բաժին ունենամ Աստուծոյ մօտ: Միասին աշխատեցէ՛ք, միասին չարչարուեցէ՛ք եւ միասին ննջեցէ՛ք եւ արթնցէ՛ք՝ իբր Աստուծոյ տնտեսներ, իբր Անոր ընտանիքը եւ սպասաւորները: Հաճելի եղէ՛ք Աստուծոյ եւ ծառայեցէ՛ք, որպէսզի պարգեւներ ստանաք Աստուծմէ»³¹:

Ասոնք Բ. դարու սկիզբէն հասնող կրօնական եւ եկեղեցական լուրջ մտածումներ, ըմբռնումներ, համոզումներ, ընկալումներ եւ կիրարկումներ են, որոնք չեն կրնար աննկատ մնալ եկեղեցական պատմութեան այս էջը ուսումնասիրողներուն համար:

Իսկապէս շատ նշանակալից մտածողութիւն եւ վկայութիւններ են ասոնք՝ Ս. Իգնատիոս Հայրապետի աստուածաբանական եւ եկեղեցաբանական հաւատքը եւ մտածողութիւնը բացայայտող՝ ընդհանրապէս Ընդհանրական Եկեղեցւոյ եւ յատկապէս Եպիսկոպոսի անձին վերաբերող:

Այս ընդհանուր մտածողութեան եւ առաքելական գործադրութեան կ'ակնարկէ նորագոյն ուսումնասիրութիւն մը, ըսելով թէ. «Նախնական Եպիսկոպոսները առաջնորդներ էին միսիոնարական (առաքելական, աւետարանչական, Տ. Ծ. Վ. Ե.) Եկեղեցւոյ մը, Քրիստոնէայ հասարակութեան մը՝ որ կանչուած էր ապրելու եւ գոյատեւելու Քրիստոնէական լոյսին եւ ճշմարտութեան մէջ եւ այդ ճշմարտութիւնը ուրիշներուն ալ յայտարարելու այնպէս, որ անոնք ալ կարենային ընդունիլ... Եպիսկոպոսներուն առաջնահերթ նպատակն էր՝ կենդանի պահել Եկեղեցւոյ միսիոնարական այս կոչումը, պաշտամունքի արարողութիւններուն նախագահել, Քրիստոնէական Հաւատքը եւ Վարդապետութիւնը ուսուցանել եւ պահպանել հերձուածներէ, հոգեւոր պաշտօնեաներ ձեռնադրել, ինչպէս նաեւ հովուական խնամատարութիւն կատարել»³²:

Նախնական Եկեղեցւոյ այս խորհելակերպը, ըմբռնումը եւ ընկալումն է ահա, որ Եպիսկոպոսը՝ իբրեւ առաջնորդ ու ղեկավար, դարձուցած է Եկեղեցւոյ առաքելութեան մէջ բարձր եւ պատասխանատու դերակատար, որ դարերու ընթացքին որոշ, յստակ դեր խաղացած է Եկեղեցւոյ հոգեւոր եւ վարչական կեանքէն ներս. Եկեղեցի, որ վարչականօրէն առաքելական ծագում ունեցող հաստատութիւն մըն է՝ «աստուածային կեանք» մատակարարելու համար Քրիստոսի հաւատացող եւ հետեւող անհատներուն եւ հասարակութիւններուն:

30 Նամակ Ֆիլադելֆիացիներուն, էջ 39:

31 Նամակ Զմիռնիա քաղաքի Պողիկարպոս Եպիսկոպոսին, էջ 54:

32 Beeson Trevor, The Bishops, London, 2002, p. 190, SCM Press.